ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր Համալսարանը հնի և նորի համալիր գաղափարակիրն է

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ «ԱՊՐԵԼ ԽԵԼԱՑԻ, ՀԶՈՐԱՑՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Մեսրոպ Մաշտոցի անվան «Մատենադարան» հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում մեկնարկել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ արտաքին գործերի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների համատեղ ջանքերով կազմակերպված, Արևելյան գործընկերության 10-ամյակին նվիրված՝ «Ապրել խելացի, հզորացնել երիտասարդներին» (Living Smart-Empowering Youth) համաժողովը, որին մասնակցել է նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ոսանողական խորհուրդը և Քաղաքային տնտեսության ֆակուլտետը:

Համաժողովին ներկա և հիմնական բանախոսներից է եղել նաև ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանը, ով, շնորհակալություն հայտնելով համաժողովի կազմակերպիչներին, խոսել է կրթության կարևորության, ճիշտ օգտագործման մասին և քաջալերել երիտասարդներին ապրել խելացի.

«Շատերը մտածում են, որ մենք շատ ավելի մեծ ներուժ ունենք, քան իրականում օգտագործում ենք, դա հենց ստարտափի նկարագրությունն է: Հայաստանը ստարտափ է, և նրա հնարավորությունները բազմաթիվ են: Համոզված եմ, որ մենք հաջողության կհասնենք»,-նշել է նախագահը:

Միջոցառմանը մասնակցել են Հայաստանի, Եվրոպական միության, ԵՄ անդամ երկրների և Արևելյան գործընկերության երկրների կրթության, երիտասարդության և նորարարության հարցերով զբաղվող բարձրաստիճան պաշտոնյաներ, ՀՀ-ում հավատարմագրված համապատասխան դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ և աշխատակիցներ, «Եվրոպական երիտասարդ դեսպաններ» ծրագրի մոտ երեք տասնյակ մասնակիցներ: Համաժողովի ընթացքում քննարկվել են կրթությանը, ձեռնարկատիրությանը, երիտասարդությանը, ստեղծարար մտածողությանը, թվայնացմանն ու խելացի մասնագիտացումներին վերաբերող հարցեր:

ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻՆ

Ճարտարապետի միջազգային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը խոսել է ճարտարապետության կարևորության, դրա թողած անջնջելի հետքի և ճարտարապետների նվիրական մասնագիտության մասին:

Շնորհավորելով ճարտարապետներին մասնագիտական տոնի առթիվ՝ Վահագն Վերմիշյանը, ճարտարապետության բնագավառում նշանակալի ավանդի համար, պարգևատրել է վաստակաշատ վեց ճարտարապետների:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական խորհրդի անդամ, Ճարտարապետության թեկնածու, պրոֆեսոր Արտյոմ Ալոյանը պարգևատրվել է «Ալեքսանդր Թամանյան» ոսկե մեդալով, Ալբերտ Զուրաբյանն ու Սարգիս Սարդարյանը՝ «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալներով, Ստեփան Նալբանդյանը, Հովհաննես Սանամյանը և Ռազմիկ Մանուկյանը՝ «Տրդատ ճարտարապետ» ոսկե մեդալներով:

Շնորհավորում ենք մեդալակիր ճարտարապետներին՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ և հոյակերտ կառույցներ:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ – ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՍԿՍԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մեկնարկեց «Ճարտարապետություն և շինարարություն – արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովը: Հյուրերին ընդունեցինք՝ ըստ համալսարանի կարգի և ավանդույթի՝ հայկական ջերմությամբ, շնորհաշատ ուսանողների աշխատանքներով ու բազմալեզու ողջույններով: Հյուրերը տպավորված էին, հիացած և պատրաստ՝ սկսել աշխատանքները արևոտ ու հյուրընկալ երկրի ամենագրկաբաց համալսարանում: Թվով 11-րդ գիտաժողովը, որի նպատակը գիտական հետազոտությունների արդյունքները, ճարտարապետության և շինարարության ոլորտներում դրանց գործնական լուծումները ներկայացնելն ու միջազգային գիտական համագործակցություն հաստատելն է, Չինաստանի, Լեհաստանի, Ռուսաստանի, Իտալիայի, Միացյալ Նահանգների, Իրանի և Վրաստանի ճարտարապետաշինարարական համալսարանների ռեկտորներին, դեկաններին ու պրոֆեսորներին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում է համախմբում արդեն 3-րդ անգամ՝ 2008թ-ին, 2010թ-ին և 2016թ-ին, երբ նշում էինք մեր համալսարանի հիմնադրման 95 ամյակը: «Ճարտարապետություն և շինարարություն – արդի հիմնախնդիրներ» գիտաժողովի՝ աշխարհի լավագույն համալսարաններից ժամանած մասնակիցներին իր ողջույնի խոսքը հղեց ռեկտոր Գագիկ Գալստյանը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր կազմակերպիչներին և վերստին ընդգծելով գիտաժողովի կարևորությունը ճարտարապետության և շինարարության առջև ծառացած խնդիրների բարձրաձայնման, տարբեր ազգությունների և մշակույթների ներկայացուցիչների միջև փորձի փոխանակման և տվյալ

ոլորտների գիտական գործունեության միջազգայնացման ու հանրահռչակման տեսանկյունից. «Գիտաժողովը կմեկտեղի նախանշված ոլորտների հավաքական գիտական ներուժը, ցույց կտա ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային գիտական կյանքում առկա որակական փոփոխություններն ու առաջընթացը, կնախանշի նոր ուղղություններ՝ դառնալով հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ», – նշեց ռեկտորը՝ հավելելով, որ գիտաժողովն անգնահատելի հարթակ է նաև ուսանողների՝ մեր ամուր ապագան կառուցողների, վաղվա մասնագետների, դասախոսների, գիտնականների ներգրավվածության առումով, քանի որ լսել և վերցնել պրոֆեսիոնալ ու նշանակալի մարդկանց տարիների փորձառությունն, ինքնին յուրատեսակ ուսումնառության պրոցես է:



ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը թեև ներկա չէր, սակայն գիտաժողովի մասնակիցներին իր ողջույններն էր հղել ուղերձի տեսքով, որում, մասնավորապես ասված էր. «21-րդ դարում տնտեսության զարգացման ժամանակակից պահանջներն ուղղակիորեն պայմանավորված են գիտատար ճյուղերի՝ այդ թվում ճարտարապետության և շինարարության ներուժի համախմբմամբ և արդիականացմամբ: Նմանատիպ միջոցառումների անցկացումը կարևոր է և խրախուսելի, քանի որ դրանց շնորհիվ ապագայի ակնկալիքներն ու սպասելիքներն առավել հավակնոտ են դառնում: Գիտաժողովի բոլոր համակազմակերպիչներին ու մասնակիցներին մաղթում եմ արդյունավետ աշխատանք և հաջողություններ»:

Այն, որ գիտաժողովը մեծ հնարավորություն է ճարտարապետների և շինարարների մտքի թռիչքի, հնարավորությունների և նոր գաղափարների համար, համաձայն է նաև ՀՀ

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը և վստահ, որ գիտաժողովի մասնակիցները մեր երկիրը դեռ շատ կկարոտեն:

Ինչ վերաբերում է կարոտելուն, ապա դրա նախանշաններն արդեն ակնհայտ էին, երբ իր տպավորություններով մեզ հետ էր կիսվում Վրաստանի Շինարարության ակադեմիայի ակադեմիկոս Մալխաս Բեդիաշվիլին: Խոստովանում է՝ ճիշտ է, իրեն առավել հետաքրքիր է սեյսմիկ շինարարությունը, քանի որ Վրաստանում դեռևս սեյսմիկ նորմերին համապատասխան շենք-շինություններ չեն կառուցվում և գիտաժողովը մեծ հնարավորություն է հայերի փորձին տիրապետելու համար, սակայն չի կարող թաքցնել նաև ոգևորությունը երևանյան արևի ու ոսկե աշնան նկատմամբ:

Արդեն 3-րդ անգամ Հայաստանում գտնվող Պեկինի Շինարարության և ճարտարապետության համալսարանի մագիստրոսական դպրոցի ղեկավար Ցի Ժենգշին նույնպես սիրով էր սպասում համաժողովի՝ հայաստանյան ընթացքին և կարևորում այն, հատկապես, փորձի փոխանակման ու նոր ընկերների ձեռքբերման համատեքստում:

Հոկտեմբերի 14-ին և 15-ին՝ «Ճարտարապետություն և շինարարություն – արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովի բանախոսները հանդես կգան «Ճարտարապետություն», «Շինարարություն, շինարարական մեխանիկա, նյութեր, տեխնոլոգիաներ», «Շինարարական և կապակցող նյութերի, բետոնների տեխնոլոգիաներ, ժամանակակից նյութերի կիրառումը ճարտարապետությունում», «Բնապահպանական ճարտարագիտություն», «Շենքերի և կառույցների ճարտարագիտական ապահովում», «Գեոդեզիա՝ ներառյալ քարտեզագրություն և կադաստր», «Building information modeling (BIM) և Geographic Information System (GIS) տեխնոլոգիաների կիրառումը շինարարական ինդուստրիայում» թեմաներով գիտական զեկույցներով:

Իսկ արդեն հոկտեմբերի 16-ին՝ մեր հյուրերը կծանոթանան Հայաստան աշխարհի պատմաճարտարապետական ժառանգության հետ, կվայելեն աշնան արևը և անպայման իրենց հետ կտանեն լուսավոր ու ժպտառատ լուսանկարներ՝ մեզ հիշելու և հաջորդ հանդիպմանն անհամբեր սպասելու համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ՝ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ստանդարտների համաշխարհային օրվա առթիվ՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից

արժանացել է շնորհակալագրի՝ ակտիվ, բարեխիղճ և տևական համագործակցության համար:

Շնորհակալագիրը հանձնվել է ՃՇՀԱՀ-ի Փորձաքննությունների և հետազոտությունների

կենտրոնի ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու Հովսեփ Հովեյանին:

Համալսարանը նույնպես իր շնորհակալությունն է հայտնում Ստանդարտների ազգային ինստիտուտին՝ մեր աշխատանքը գնահատելու և ուշադրության արժանացնելու համար:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐԻ ԹԵՄԱ

Ուսանողներին քաջալերելու, նրանց աշխատանքները գովասանքի արժանացնելու լավագույն միջոցը բալային գնահատականը չէ, այլ՝ նրանց ստեղծագործությունների ցուցադրությունն ու հանրայնացումը:

Առողջ, բարենպաստ ու տրամադրող միջավայրում ստեղծագործելը երիտասարդ արվեստագետին մղում է բացահայտելու իր ներքին հնարավորությունները և նպաստում երևակայության ազատությանը: Այս համոզմունքով՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի գեղանկարչության բաժնի՝ Էդուարդ Իսաբեկյանի անվան արվեստանոցի սաներն «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում ներկայացնում են «Ճարտարապետություն և շինարարություն» խորագրով թեմատիկ ցուցահանդեսը:

Ցուցահանդեսն արդեն 2-րդ անգամ իրականություն է դառնում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանի մտահղացմամբ, աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ: Նախորդը, որն անցկացվեց նախորդ տարի և կրում էր «Տրանսպորտ և առևտուր» խորագիրը, ունեցավ կատալոգային հրատարակություն: Կազմակերպիչները վստահ են, որ այս մեկն էլ, Գագիկ Գալստյանի աջակցությամբ, կունենա տպագիր վավերացում:

Ցուցահանդեսի մասնակից ուսանողներից մեկը, տպավորված ու ոգեշնչված էր, հատկապես, թեմայի ընտրությամբ, քանզի այն հնարավորություն է տվել անդրադառնալ այնպիսի այնպիսի առօրեական գործունեության, ինչպիսին շինարարությունն է և այնպիսի մնայուն արժեքների,

ինչպիսին՝ ճարտարապետությունը: Ցուցադրության ևս մեկ առանձնահատկություններից էլ ցուցահանդեսում ղեկավարների աշխատանքների ներառումն է: Ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանի և ավագ դասախոս Արթուր Հովհաննիսյանի աշխատանքների ներկայությունն ուսանողների համար որքան կարևոր, այնքան էլ հետաքրքիր է՝ սերունդների գեղարվեստական մտածողությունը, արտահայտությունների նմանություններն ու տարբերություններն շեշտադրելու համար:

Ողջունելով ցուցահանդեսի մասնակիցներին՝ ռեկտոր Գագիկ Գալստյանը զուգահեռներ տարավ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում պարբերաբար բացվող ցուցադրությունների միջև և հավանական համարեց ռեկտոր Արամ Իսաբեկյանի՝ համատեղ ցուցահանդես իրականացնելու գաղափարը:

ՎԵՆԵՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ԳԵՐԱԶԱՆՑ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Շինարարության ֆակուլտետի Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի ընդլայնված նիստն հատուկ նշանակության էր: Գործընկերները հիշում էին, մեծարում ու խոսում ամբիոնի նախկին վարիչ Վեներա Մարգարյան նվիրված մասնագետի, լավ մարդու և ընկերոջ մասին, բայց ոչ միայն: Շինարարության ֆակուլտետի դեկան Դավիթ Գրիգորյանը և Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի վարիչ Սուրեն Թովմասյանը ներկայացրեցին նիստի բուն բովանդակությունը:

Դավիթ Խանաղյան. Շինարարության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող՝ ինժեներական գեոդեզիա մասնագիտացմամբ: Նա այն ուսանողն է, ով արժանացել է Վեներա Մարգարյանի անվան գերազանցության մրցանակի:

ՎԵՆԵՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ
VENERA MARGARYAN EXCELLENCE IN GEODESY AWARD
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA
Այս մրցանակը տրվում է
This award is presented to
Խանաղյան Դավիթին
գեոդեզիա առարկայի գերազանց ուսումնասիրության համար
for excellency in the study of geodesy
Ներկայացված է
Presented on the
18.10.2019թ.
ԳԵՈԴԵԶԻԱ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ
CHAIR OF ENGINEERING GEODESY
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
RECTOR OF NUACA

Առաջիկա 10-ը տարիների համար նախատեսված կրթաթոշակի գաղափարը երջանկահիշատակ տիկին Մարգարյանի զարմուհիներինն է: Ասում են՝ ուզում էինք վառ պահել հորաքրոջ անունը, համբավն ու տարիների անձնվեր աշխատանքը:

Յուրաքանչյուր տարի՝ անվանական միանվագ կրթաթոշակը կստանա նշված ֆակուլտետի

լավագույն առաջիմություն ցուցաբերած ուսանողը: Մրցանակը պարտավորեցնող է՝ նշեց Դավիթ Խանաղյանը և խոստացավ անել առավելագույնը՝ տիկին Մարգարյանի ամբիոնի անունն ու մասնագիտությունը տվյալ բնագավառում բարձր պահելու համար:

ՆՇԵՑԻՆՔ ՋԳՄՕ ԱՄԲԻՈՆԻ 70-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Նոյեմբերի 11-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում իսկական տոն էր, տարեդարձ: Նշում էինք «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ամբիոնի 70 ամյակը:

Դեռևս 1949թ-ին, երբ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում ստեղծվեց «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» մասնագիտական ամբիոնը, դասախոսական անձնակազմի պակաս կար: Սակայն, նպատակները հեռահար էին, իսկ կայացած ու պրոֆեսիոնալ մասնագետներով ամբիոնը զինելու ցանկությունը՝ մեծ: Հետևաբար՝ Կաթսայական կայանքների և գազամատակարարման առարկաների դասավանդման համար պրոֆեսորներ հրավիրվեցին Լենինգրադից և Բաքվից: Իսկ արդեն 1954թ-ին, երբ ամբիոնի առաջին 25 շրջանավարտները փայլուն կերպով պաշտպանեցին դիպլոմային աշխատանքները, և որոնցում ներկայացված շատ դրույթներ հետագայում ներդրվեցին արտադրության մեջ, ակնհայտ դարձավ, որ ջանքերն իզուր չէին. ամբիոնը կայացած էր և երկար, հաջողություններով ու հայտնություններով պսակված ճանապարհ ուներ անցնելու:

Այսօր, ամբիոնի 70 ամյակին նվիրված միջոցառմանը ներկա հյուրերի երախտիքի ու շնորհավորանքների խոսքերը, բազմաթիվ պատվոգրերն ու շնորհակալագրերն ապացույցն էին այն բանի, որ մեր համալսարանի ՋԳՄՕ ամբիոնն անգերազանցելի է:

Շնորհավորելով տարեդարձի առթիվ՝ ասվածը փաստեց նաև ՀՀ Քաղաքաշինության

պետական կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը. «Ես բազմաթիվ հեղինակավոր համալսարաններում եմ եղել և այսօր կարող եմ վստահ ասել, որ ՃՇՀԱՀ-ի «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ամբիոնն իր սարքավորումների հագեցվածությամբ, բանիմաց ու պատրաստված մասնագետներով չի զիջում ոչ մի համալսարանի նման ամբիոնի»,- նկատեց Վ. Վերմիշյանը՝ հիշելով իր ուսանողական տարիները, ՋԳՄՕ ամբիոնի առարկաների նկատմամբ իր սերը և Քաղաքաշինության կոմիտեի կողմից ամբիոնին՝ 70-ամյա հոբելյանի առթիվ, պարգևատրեց Ալեքսանդր Թամանյանի անվան ոսկե մեդալով:

Հյուրերին իր ողջույնի խոսքը հղեց նաև ռեկտոր Գագիկ Գալստյանը, ով, առաջին հերթին կարևորեց այս ամբիոնի պատրաստած մասնագետների դերը բոլորիս կյանքում, մասնագետներ, որոնք ապահովում են մեր կենցաղն ու գոյատևումը, լուծում ջերմության, զովության ու հարմավետության խնդիրները. «Հայ շինարարը դեռ անհիշելի ժամանակներից կառուցել և լուծել է շինությունների, կացարանների էներգախնայողության, օդափոխության, ջեռուցման, ձայնամեկուսացման և բազմաթիվ այլ խնդիրներ: Այս մասնագիտություններն ընտրած յուրաքանչյուր ուսանող առաջին իսկ օրվանից պետք է ունենա այն գիտակցությունը, որ կոչված է մարդկանց անվտանգությունը, բարեկեցությունը և հարմարավետությունն ապահովելու համար»,- նշեց ռեկտորը՝ նաև հիշելով ամբիոնի նախկին վարիչներին ու շնորհակալություն հայտնեց ներկայիս վարիչ Աննա Քարամյանին՝ իր աշխատանքային փորձն ու գիտելիքներն ամբիոնի բարգավաճման գործում ներդնելու, մասնագիտության նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը բարձրացնելու և աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստման համար:

Այսօր ամբիոնի տրամադրության տակ են գտնվում ճանաչողական, ուսուցողական նշանակության գերիզոր սարքավորումներով հագեցած և կահավորված 4 լաբորատորիաներ՝ «Ջեռուցման և օդափոխություն», «Հովացման և ջեռուցման ֆրեոնային կենտրոնացված մուլտիզոնային համակարգեր», «Էներգաարդյունավետություն», «Գազամակարարում»: Այս ամենը մեր համալսարանում իրականություն դարձնելու համար ռեկտոր Գալստյանը շնորհակալություն հայտնեց համաշխարհային ճանաչում ունեցող «Միցուբիշի Էլեկտրոնիկս» ընկերությանը, «Կոնսել ՍՊԸ» -ին, «Թերմոռոս Ար» ընկերությանը, «Յագա» դիզայն ռադիատորների ընկերությանը, «Գազպրոմ Արմենիային», «Շտիգեն» ընկերությանը, «Վենջ Ինջիներգ» և «Էյր Քոնսալթինգ» ընկերություններին, ՄԱԿ-ի զարգացման հայաստանյան գրասենյակին, որոնց, սերտ համագործակցության համար, համալսարանի կողմից հանձնեց շնորհակալագրեր: Հոբելյանական միջոցառմանը ներկա էին ամբիոնի նախկին շրջանավարտները, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ոլորտի ներկայացուցիչներ: Շնորհավորանքներով հանդես եկան նաև նաև ամբիոնի վարիչ Աննա Քարամյանը, ՀՀ Ճարտարապետների պալատի փոխնախագահ Ալեքսանդ Բաղալյանը, վերոնշյալ ընկերությունների ներկայացուցիչները:

Եվ վերջում, ի՞նչ տարեդարձ՝ առանց պարգևների: Ամբիոնի պրոֆեսորներին՝ ոլորտում ներդրած ավանդի համար, համալսարանը պարգևատրեց շնորհակալագրերով:

ԲԱԼՏՐՈՒՇԱՅՏԻՍԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՃԱՆԱՉՎԵՑ ԼԵՌՆԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԸ

Ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ Արմինե Քերոբյանը, Աննա Իվանյանը, Աստղիկ Մաշինյանը, Վրույր Ենոքյանը և Լեռնիկ Գալստյանը «Երևան քաղաքի հատակագծատարածական կառուցվածքում հնավայրերի ճարտարապետահատակագծային ինտեգրման հայեցակարգ» թեմայով նախագծերի վրա դեռևս 1 տարի առաջ են սկսել աշխատել: Նրանց բոլորի նպատակը մեկն է՝ արժանանալ լիտվացի պատմաբան, արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան մրցանակին:

Արդեն 3-րդ տարին է, ինչ «Պետրոս Ալոյան»-ի անվան հիմնադրամը՝ ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի

հետ համատեղ անցկացնում է մրցույթ՝ «Պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում» անվանակարգում լավագույն ուսանողին բացահայտելու և պարգևատրելու համար:

Մրցույթին ներկայացված ուսանողական նախագծերի շնորհանդեսին ներկա էին ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն, ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, ՀՀ Ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանը, «Պետրոս Ալոյան»-ի անվան հիմնադրամի տնօրեն Հայկ Ալոյանը, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Էմմա Հարությունյանը, Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը, դասախոսներ:

Հանձնախմբի որոշմամբ՝ այս տարի Բալտրուշայտիսի անվան մրցանակակիր ճանաչվեց Լեռնիկ Գալստյանը, ում, բացի դրամական պարգևից, հանձնվեց նաև հավաստագիր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆՆ ԵՆ

Հոկտեմբերի 6-13-ը Նիժնի-Նովգորոդում կայացած ճարտարապետական և դիզայներական աշխատանքների միջազգային 28-րդ մրցույթ-ստուգատեսին, շուրջ 62 հեղինակավոր բուհերի շարքում, ներկա էր նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:

Մրցույթ-ստուգատեսին իրենց նախագծերն էին ներկայացրել Ճարտարապետության ֆակուլտետի 16 ուսանող: Բացի հիացական ու գովասանքի խոսքերից՝ ուսանողները Հայրենիք վերադարձան նաև դիպլոմներով ծանրաբեռնված:

Նրանցից 11-ը մեր համալսարանի անունը բարձր պահեցին 1-ին կարգի դիպլոմներով, իսկ 5-ը՝ 2-րդ կարգի: Մերն էին նաև մրցույթի հատուկ դիպլոմները, որոնցով պարգևատրվեց մեկ ուսանող և Ճարտարապետության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը՝ մանկավարժական ու ստեղծագործական վարպետության համար:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԵՐԿՈՒՍՆ ԵՆ

Արդեն 3-րդ տարին է, ինչ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում անցկացվում է մրցույթ, որտեղ կարևորվում են ոչ միայն ուսանողի գիտելիքները, այլ նաև՝ նրա մարդկային որակներն ու բնավորությունը:

Խոսքը «Ճարտարապետ Արամ Խաչատրյան» հիմնադրամի կողմից կազմակերպվող համանուն մրցանակաբաշխության մասին է, որը դրամական մրցանակ է շնորհում մագիստրատուրան ավարտած, ուսանելու տարիներին առաջադիմությամբ, ճարտարապետական նախագծերի քանակով առանձնացած ու մարդկային բարձր հատկանիշներով օժտված շրջանավարտ-ճարտարապետը:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս անգամ մրցանակը շնորհվեց ոչ թե մեկ, այլ՝ միանգամից երկու շրջանավարտի. համալսարանն ավարտած և արդեն զինվորական ծառայության մեջ գտնվող Հայկ Ալեքսանյանին և Աննա Խաչատրյանին:

Արարողությանը ներկա էին ճարտարապետ Արամ Խաչատրյանի ընտանիքի անդամները, Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը, դասախոսներ, ովքեր շնորհավորեցին հաղթողներին, մաղթեցին բարի ու մասնագիտական բեղմնավոր ճանապարհ:

ԵԿԱՆ, ՈՐ ՍՏԵՂԾԵՆ ՄԵԾ ԱՐՎԵՍՏ

Մեծ ու բարձրարժեք արվեստ ստեղծելու համար անհրաժեշտ է սերունդների փոխգործակցություն, տեսնելու, ուսումնասիրելու և ստեղծագործելու անհագ ցանկություն:

Դիզայն ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներն օրեր շարունակ նկարում, ջնջում ու նորից նկարում էին՝ հայտնի նկարիչների ոճով գույնն ընկալելու և փոխանցելու համար: Վերջապես ամփոփվեց ֆակուլտետի Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված «Եկե՛ք ստեղծենք Մեծ արվեստ» խորագրով գունատեսության մրցույթը: Դասախոսների և ուսանողների ջերմ միջավայրում քննարկվեց հինգ ստեղծագործությունները և ընտրվեց լավագույն աշխատանքը՝ չնայած, որ հաղթանակի էին արժանի բոլոր գործերը: Շնորհա-վորում ենք բոլոր մասնակիցներին՝ մաղթելով նոր ու հետաքրքիր հաղթանակների շարունակականություն:

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐՆ ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐՈՎ

ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի շրջանակում՝ նոյեմբերի 24-30-ը, աշխատանքային այցով, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում են հյուրընկալվել Միլանի Պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսորներ Մարիա Քրիստինա Ջիամ-բրունոն, Պաոլո Պիլերին և միջազգային բաժնի աշխատակից Կիարա Պելիզարին: Այցի ընթացքում իտալական պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել մեր համալսարանի ֆակուլտետների դեկավարների, ուսանողների և ադմինիստրատիվ աշխատակազմի ներկայա-ցուցիչների հետ՝ քննարկելով երկկողմ հետաքրքրություններ ներկայացնող համա-տեղ ծրագրերի իրականացման և մեր համալսարանականների՝ ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրով շարժունության հետ կապված խնդիրները:

Միլանի պոլիտեխնիկի պրոֆեսորների այցն այսքանով չի սահմանափակվել: Վերջիններս, նոյեմբերի 25-28-ը, մեր համալսարանի ուսանողների համար անցկացրել են «Մշակութային ժառանգության պահպանության խնդիրները քաղաքային միջավայրում՝ Գյումրիի օրինակի վրա» խորագրով մրցույթ-ստուգատես:

Այսօր ուսանողները դասախոսների դատին հանձնեցին իրենց նախագծերը, որոնցում ներկայացրեցին Գյումրին նոր դիտանկյունից, թե ինչպես պահպանելով մշակութային ժառանգությունը, առավել հարմարավետ լուծումներ հաղորդել քաղաքին:

Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը բարձր գնահատեց ուսանողների՝ այսքան սեղմ ժամկետում կատարած աշխատանքը:

Նախագծերի շնորհանդեսի ավարտին՝ իտալացի գործընկերներին և մասնակից ուսանողներին հանձնվեցին հավաստագրեր:

ՁԱՅՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԸՆՏՐՎԵՑ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում հոգաբարձուների խորհրդի նիստում քվեարկությամբ՝ 2019թ-ի դեկտեմբերի 2-ին ձայների մեծամասնությամբ՝ 27 կողմ, 3 ձեռնպահ, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար է ընտրվել համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Եղիազար Վարդանյանը: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնում Եղիազար Վարդանյանի թեկնածությունը առաջադրվել է գիտխորհրդի առաջարկով:

ՃՇՀԱՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանը շնորհակալություն է հայտնել վստահության համար և ընդգծել. «Ինչպես բուհի այնպես էլ իմ

մասնագիտական հմտությունների զարգացման և առաջընթացի խթանիչ ուժը եղել և մնում է մեր համալսարանի կոլեկտիվի համախմբվածությունը»: Միևնույն ժամանակ, նա ընդգծել է համալսարանի նախկին ռեկտոր Գագիկ Գալստյանի մեծ ներդրումը բուհի զարգացման գործում, որն արձանագրվել է Գագիկ Գալստյանին 5 տարի 8 ամիս արդյունավետ պաշտոնավարման ժամանակահատվածում և հույս հայտնել, որ նա կշարունակի բուհի կողքին լինել: Իր հերթին համալսարանում նախկին ռեկտոր Գագիկ Գալստյանը շնորհավորել է Եղիազար Վարդանյանին և նշել, որ իր գերնպատակը եղել և մնում է բուհի կայունությունն ու զարգացումը: «Համալսարանի փոքր և մեծ ծրագրերը իրականություն են դարձել պրոֆեսորադասախոսական կազմի հետ արդյունավետ աշխատանքի արդյունքում»,-եզրափակել է նա՝ համատեղ աշխատանքի համար շնորհակալություն հայտնելով ՃՇՀԱՀ-ի ամբող աշխատակազմից:

ՃՇՀԱՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանը 1996-2001թ սովորել և ավարտել է ՃՇՀԱՀ-ի տրանսպորտային շինարարության ֆակուլտետը, 2004-ին ավարտել է համալսարանի ասպիրանտուրան: 2003-2004-ը սովորել և ավարտել է Փարիզի ճանապարհների և կամուրջների ազգային դպրոցը: 2004-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2008-2011-ը ավարտել է ՃՇՀԱՀ-ի դոկտորատուրան, 2013-ին՝ տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան: Մասնագիտական գործունեությունը սկսել է հարազատ բուհում՝ սկսելով որպես ասպիրանտ ու հասնելով մինչև համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտորի պաշտոնին:

ՃՇՀԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ-ում քաղաքաշինության, շինարվեստի և կրթության ոլորտներում դրսևորած նշանակալի ու անբասիր աշխատանքի համար ՀՀ վաստակավոր շինարար, տ.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Գալստյանը պարգևատրվել է «Ջիմ Թորոսյան» ոսկե մեդալով:

ԱՌԱՋԻՆՆ ԵՆՔ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎՈԼԵՅԲՈԼՈՒՄ

Հանրապետական ուսանողական մարզական խաղերի շրջանակներում ՀՊՏՀ մարզադահլիճում անցկացված վոլեյբոլի տղաների առաջնության եզրափակչում՝ լարված և հավասար պայքարում մեր թիմը հաղթեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի(ՀՊՏՀ) թիմին՝ դառնալով 2019թ Հանրապետական ուսանողական մարզական խաղերի չեմպիոն: Մրցանակակիր բոլոր թիմերը պարգևատրվեցին պատվոգրերով, մեդալներով և գավաթներով:

ՃՇՀԱՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հակոբ Բադալյանը նկատեց.<<Տարեցտարի համալսարանի մարզական արդյունքները բարելավվում են: Անցած տարվա ուսանողական խաղերի վոլեյբոլի մրցաշարում զբաղեցրինք 2-րդ հորիզոնականը՝

այս տարի 1-ինն ենք>>:

Նշենք, որ ՃՇՀԱՀ վոլեյբոլի տղաների թիմը մասնակցում էր ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպած Հանրապետական ուսանողական խաղերի վոլեյբոլի մրցաշարին:

Մեր թիմը խմբային փուլում հաղթելով Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի և Երևանի պետական համալսարանի թիմերին դուրս եկավ կիսաեզրափակիչ: Կիսաեզրափակիչում լարված և դիտարժան պայքարում հաղթելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարանի թիմին դուրս եկանք եզրափակիչ, որտեղ էլ և հաղթեցինք:

Շնորհավորում ենք մեր վոլեյբոլի թիմին, մարզիչներին և մեր բուհին այս հաղթանակի կապակցությամբ՝ ցանկանալով նորանոր հաղթանակներ:

ԿԳՄՍՆ ԿՏԱԿ ՊՈԱԿ-Ի ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ

ՃՇՀԱՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանի հրավերով՝ 2019թ-ի դեկտեմբերի 5-ին, ԿԳՄՍՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) ղեկավար Արտակ Պողոսյանը հյուրընկալվել էր համալսարանում: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին և վերլուծեցին մի շարք արդիական՝ համալսարանում ուսումնական գործընթացներում նոր տեխնոլոգիաների ներդրման, բուհի միջազգային վարկանիշավորման, ուսանողների հետադարձ կապը դեկանատների և ամբիոնների հետ ակտիվացնելու, ինչպես նաև դիմորդներին մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բարձրացման հարցեր: Քննարկումների ընթացքում ուրվագծվեց հետագա անելիքների ճանապարհային քարտեզը:

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐ

Մեր համալսարանի յուրաքանչյուր անդամի հաջողությունն, առաջին հերթին, պատվաբեր է համալսարանի համար: Հպարտությամբ և ուրախությամբ ընդունեցինք ՀՀ կառավարության որոշումը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Սուրեն Թովմասյանին Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավար նշանակելու մասին: Այս պատասխանատու պաշտոնը ստանձնելուց հետո պարոն Թովմասյանը վստահեցրեց, որ մեր երկրի քաղաքացիները կարճ ժամանակում կտեսնեն մեծ, շոշափելի փոփոխություններ՝ կադաստրին վերաբերվող ոլորտում: ՃՇՀԱՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանն անձամբ իր, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության անունից սրտանց շնորհավորում է հարգարժան պարոն Թովմասյանին՝ պատվաբեր պաշտոնի ստանձնման առթիվ՝ մաղթելով արգասաբեր և հայրենանպաստ գործունեություն: Համոզված ենք, որ պարոն Թովմասյանի մասնագիտական և մարդկային բարձր որակները կծառայեն՝ ի նպաստ ոլորտի զարգացմանը:

ՀՊԱՐՏ ՁԻՆՎՈՐ, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ ԵՎ 1-ԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ՝ ՆԱՐԵԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության ֆակուլտետի բակալավրիատն ավարտած Նարեկը, նույնիսկ զինվորական ծառայության ընթացքում չի մոռանում, որ ճարտարապետ է մտքով, հոգով ու գիտակցությամբ:

Երբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարվեց «100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթի հերթական անցկացման մասին, որի նպատակն է զարգացնել երիտասարդների նորարարական մտածողությունը, ներգրավել նրանց սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում, ՃՇՀԱՀ-ի Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանի խորհրդով, մասնակցության հայտ ներկայացրեց նաև Նարեկն՝ իր «Տիեզերական տեխնոլոգիաների հետազոտման և զարգացման կենտրոն Բյուրականում» դիպլոմային աշխատանքով:

Մրցույթին՝ 5 անվանակարգերում ներկայացված բազմաթիվ աշխատանքներից եզրափակիչ փուլ անցավ միայն 17 նախագիծ, որոնց թվում էր նաև մեր Նարեկի նախագիծը: Իսկ վերջնական արդյունքն ավելի քան ոգևորիչ, պատվաբեր ու խրախուսական էր: Նարեկ Պետրոսյանը գրավեց 1-

ին տեղը՝ «Ճարտարապետություն» անվանակարգում:

Դեկտեմբերի 10-ին՝ մրցույթի արդյունքների ամփոփման հանդիսավոր արարողությանը ներկա էին ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը, ՃՇՀԱՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանը, պաշտոնատար անձինք և հյուրեր: Շնորհավորելով բոլոր մասնակիցներին ու հաղթողներին՝ նախարարը նշեց, որ առօրեական գործընթացներում շատ նորարարական գաղափարներ նկատելի չեն, ուստի նմանօրինակ մրցույթները լավ հնարավորություն են թե՛ հեղինակներին ճանաչելի դարձնելու, թե՛ այդ գաղափարների կիրառական առումով:

Բակալավր կրթական ծրագրով՝ «ճարտարագիտություն» անվանակարգում 2019թ-ի «Լավագույն ուսանող» ճանաչված Նարեկը մեզ հետ զրույցում անկեղծացավ և ասաց, որ ճարտարապետությունն իր երազանքի մասնագիտությունն է, ներկան ու ապագան: Որպես ՀՀ արժանավոր քաղաքացի՝ Հայրենիքին պարտքը մատուցելուց հետո, որոշել է ուսումը շարունակել Իտալիայում և դառնալ մեր ժամանակների լավագույն ճարտարապետներից մեկը: Մենք էլ շնորհավորում ենք Նարեկին՝ հաղթանակի առթիվ և մաղթում խաղաղ ծառայություն ու դեպի լուսավոր հեռուն ձգվող նպատակների անխոչընդոտ իրականացում:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ERASMUS+ FLEXWBL ԾՐԱԳԻՐԸ

2019 թ-ի դեկտեմբերի 16-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում տեղի ունեցավ Էրազմուս+ FLEXWBL «Հայաստանի և Ռուսաստանի բուհերում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության համար ճկուն, նորարարական և պրակտիկ համակարգի ստեղծում» ծրագրի մեկնարկային հանդիպումը: Այս նպատակով համալսարանը հյուրընկալեց Երևան ժամանած գործընկեր համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչներին: Ծրագրի գլխավոր նպատակը աշխատանքային հիմունքներով ուսուցման իրականացման համար հարթակ ստեղծելն է Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության համակարգում:

Ծրագրի մեկնարկային հանդիպմանը հանդես եկավ ՃՇՀԱՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եղիազար Վարդանյանը: Ողջունելով ներկաներին, պարոն Վարդանյանն ընդգծեց աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպման կարևորությունը մեր բուհերի համար, ինչպես նաև իր շնորհակալական խոսքն ուղղեց Եվրոպական Միությանը, որը մեծ աջակցություն է ցուցաբերում կրթության ոլորտի զարգացմանը՝ ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի միջոցով: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը տեղեկացրեց նաև, որ ԿԳՄՍՆ-ի նախաձեռնությամբ ներկայումս Հայաստանյան բուհական համակարգում տեղի են ունենում խոշոր և հետաքրքիր բարեփոխումներ, նշելով <<Կրթության և գիտության մասին>> նոր օրենքի

նախագիծը:

Մեկնարկային հանդիպմանը մասնակցեցին Տվերի պետական համալսարանի (ք. Տվեր, ՌԴ), Պերմի պետական համալսարանի (ք. Պերմ, ՌԴ), Դոնի պետական տեխնիկական համալսարանի (ք. Դոնի Ռոստով, ՌԴ), Լիեպայայի համալսարանի (ք.Լիեպայա, Լատվիա), «Էնիոստուդիո» (ք.Տվեր, ՌԴ) կազմակերպության, «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման դաշնային ծառայությունների ոլորտի ադմինիստրատիվ աշխատողների և մասնագետների վերապատրաստման առաջադեմ ինստիտուտի (ք. Ժելեզնոդորոժնի, Մոսկվայի մարզ, ՌԴ), Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Գավառի պետական համալսարանի և ՃՇՀԱՀ-ի, ինչպես նաև Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչները: Մասնակիցները քննարկեցին FLEXWBL Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա պլանավորված աշխատանքները և սպասվող արդյունքները, ինչպես նաև ներկայացրեցին իրենց համալսարանները և կազմակերպությունները:

ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 18-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում հյուրընկալեցինք ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյին: Դեսպանի այցի նպատակն ինչպես ՃՇՀԱՀ ռեկտորի ժ/պ Եղիազար Վարդանյանի հետ ծանոթությունն էր, այնպես էլ ներկա և ապագա ծրագրերի քննարկումը: Հանդիպմանը ներկա էին նաև համալսարանի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Փոխադարձ ողջույններից հետո՝ դեսպանը վերահաստատեց այն բոլոր հեռահար ծրագրերը, որոնք արդեն իսկ ուրվագծված և ենթակա են իրականացման: Վինչենցո Դել Մոնակոն հավաստիացրեց, որ հայ-իտալական թե՛ ակադեմիական, թե՛ գիտական կապերը կշարունակվեն զարգանալ և ընդլայնվել:

Իր հերթին՝ Եղիազար Վարդանյանն ընդգծեց այն կարևոր հանգամանքը, որ մեր համալսարանի և իտալական մի շարք բարձրակարգ արվեստի, ճարտարապետական համալսարանների հետ համագործակցությունը, կրթական ու մշակութային համատեղ նախագծերի անցկացումը երկար տարիների կենսագրություն ունի և հույս հայտնեց, որ այդ

համագործակցության արգասաբեր շարունակականության համար համալսարանը կօգտագործի բոլոր օղակները:

Հանդիպմանը դեսպան Վինչենցո Դել Մոնակոն ցանկություն հայտնեց 2020թ-ին նույնպես Իտալիայի դիզայնի և ճարտարապետության օրերը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում անցկացնելու մասին՝ վկայակոչելով այս տարվա հաջող նախադեպը: Դեսպանը հավելեց, որ այդ օրերին նախատեսված է լուսային էֆֆեկտների հայտնի մասնագետ Ֆրանց Չեռամի և Նեապոլի Սուոր Օրսոլա Բենինկասա համալսարանի պրոֆեսորների այցը մեր համալսարան, ինչպես նաև վերոնշյալ համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի և մեր համալսարանի միջև համագործակցության պայմանագրի կնքումը:

Ռեկտորի ժ/պ Եղիազար Վարդանյանը հավանություն տվեց դեսպանի առաջարկին՝ նշելով, որ Իտալիայի դիզայնի և ճարտարապետության օրերին իրենց նախագծերով ակտիվ մասնակցություն կունենան նաև մեր ուսանողները:

Հետագա ծրագրերի մասին խոսելիս՝ պարոն Վարդանյանը, համալսարանի անունից, դիմեց դեսպանին՝ համալսարանում իտալերեն լեզվի կուրսեր անցկացնելուն, ինչպես նաև իտալական ROCHEMP ծրագրին ՃՇՀԱՀ-ի դերն ու մասնակցությունն ընդլայնելուն աջակցելու նպատակով:

ՔՈ ՍԱՆՏԱՆ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ Է, ՓՈՔՐԻ՛Կ

«…Ես կոնֆետներ եմ ուզում… Ես՝ մեծ տոնածառ, երգող կամ պարող տիկնիկ… Ես զինվոր եմ, զենք եմ ուզում… Իսկ ես միայն ուզում եմ, որ մայրիկս առողջանա…»:

Նոր տարին հրաշքներին հավատալու տոն է, տոն, որի հրաշքներն իրականացնում է փոքրիկների ամենասիրելի, ամենակարող ու խորհրդավոր բարեկամը՝ Ձմեռ պապը: Այս տարի Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի անապահով ընտանիքների փոքրիկներից շատերի երազանքն անկատար չի մնա՝ շնորհիվ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհրդի և Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի մտահղացման:

Շաբաթներ առաջ հենց նրանք նախաձեռնեցին «Դարձի՛ր Սանտա» մարդասիրական, բարեգործական ծրագիրը, որի շրջանակներում հավաքագրվեցին սահմանամերձ գյուղերում բնակվող 3-10 տարեկան փոքրիկների՝ Ձմեռ պապիկին ուղղված ամանորյա նամակները:



Այսօր շուրջ 100 նամակ՝ շարադրված մեծ հույսով, մանկան անկեղծ սիրով և անպատմելի սպասումով, փնտրում էր իր հրաշագործ Ձմեռ պապին՝ համալսարանի ղեկավարության, դասախոսների, աշխատակիցների և ուսանողների շարքերում: Պատահականությամբ սկզբունքով ընտրելով նամակը՝ նրանցից յուրաքանչյուրը դարձավ այն գաղտնի Սանտան, ում սրտատրոփ սպասում է յուրաքանչյուր փոքրիկ նամակագիր:

Արդեն ուրբաթ օրը բոլորի նվերները կազմ ու պատրաստ կսպասեն իրենց հասցեատերերին, իսկ շաբաթ և կիրակի, Ուսխորհրդի անդամները, Ձմեռ պապիկի կախարդական հանդերձանքով, կմեկնեն սահմանամերձ գյուղեր՝ փոքրիկների նվերները հանձնելու և հավատացնելու, որ ամանորյա երազանքներն իրականանալի են:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԵՔ ՈՒՍԱՆՈՂԸ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ԵՆ

Դեկտեմբերի 24-ին՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում, ամփոփվել է «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթը: Հաղթողներին հավաստագրերով և ՀՀ պետական բյուջեից հատկացված անվանական դրամական կրթաթոշակներով պարգևատրել է անձամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:Հպարտությամբ և մեծ ուրախությամբ հայտնում ենք, որ պարգևներից և հաղթողի տիտղոսից անմասն չեմ մնացել նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները: Այսպիսով՝ Ճարտարագիտության ոլորտում 1-ին տեղերը շնորհվել են մեր համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Օհանյանին և նույն ամբիոնի բակալավրի 4-

րդ կուրսի ուսանողուհի Անի Ղազարյանին: Դե իսկ Մշակույթի ոլորտում 2-րդ հորիզոնականը զբաղեցրել է Դիզայնի ֆակուլտետի Ինտերիերի և էքստերիերի, դիզայնի ամբիոնի 2 րդ կուրսի ուսանող Մեսրոպ Սահակյանը: Այսօր մեր լավագույն ուսանողներին հյուրընկալել է համալսարանի ղեկավարությունը ի դեմս ռեկտորի ժ/պ Եղիազար Վարդանյանի: Նա շնորհավորել է հաղթողներին՝ հորդորելով շարունակել ուսումը նույն բարձր առաջադիմությամբ և հաղթական ոգով: Որպես պարգևատրում՝ պարոն. Վարդանյանը, համալսարանի կողմից, ուսանողներից յուրաքանչյուրին նվիրել է ՀՀ ժողովրդական և վաստակավոր նկարիչ, մեր համալսարանի պրոֆեսոր Հրանտ Թադևոսյանի գիրքը: Նշենք, որ «Լավագույն ուսանող» մրցույթում մրցանակները տրվել են 7 ոլորտներում՝ բնագիտություն, հասարակագիտություն, հայագիտություն, հումանիտար, բժշկություն, ճարտարագիտություն, մշակույթ, սպորտ:

Այս տարի «Լավագույն ուսանող» մրցույթում 1-ին տեղը շնորհվել է 14 ուսանողի, 2-րդ և 3-րդ տեղերը՝ 12-ական ուսանողի: Շնորհավորում ենք մեր ընկերներին հաղթանակի կապակցությամբ և մաղթում այսօրինակ հաջողությունների ու ձեռքբերումների անվերջանալի շղթա:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ «ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ» ԴԻՊԼՈՄՆԵՐՈՎ

ՃՇՀԱՀ դիզայնի ամբիոնի ուսանողներն արդեն 10-ը տարի անընդմեջ մասնակցում են

Մոսկվայում կազմակերպվող «Заводной апельсин» միջազգային ուսանողական մրցույթին՝ տարբեր անվանակարգերում մշտապես արժանանալով ամենաբարձր մրցանակների:

Այս տարի «Заводной апельсин-2019»՝ Փաթեթավորման լավագույն դիզայն խորագիրը կրող մրցույթին մասնակցած մեր ուսանողները Հայրենիք են վերադարձել կրկին պարգևներով ծանրաբեռնված:

Դեկտեմբերի 24-ին՝ «Արմենպակ» ընկերության նախագահ Ս. Չիբուխչյանը և Դիզայնի ամբիոնի վարիչ Աշոտ Բաղդասարյանը մրցանակներ և դիպլոմներ են հանձնել մրցույթի՝ 2019թ-ի մասնակիցներին: Նրանք են՝ դափնեկիր Սարգսյան Աստինեն, դափնեկիր Մովսիսյան Քրիստինան, Աղաջանյան Լիլիթը, Գաբրիելյան Մանեն, Ղազարյան Անահիտը:

Համալսարանի ողջ անձնակազմը շնորհավորում է մեր մրցանակակիր ուսանող-ներին՝ համալսարանի անունը մշտապես բարձր պահելու համար: